ՇՈԿՈԼԱԴԻ ԲԱՆԿ և ԱՎԵԼԻՆ

Շուտով Սուրբ Ծնունդ է, և մինչ մենք նվերներ ենք ընտրում մեր սիրելիների համար, զարդարում ենք եղևնին և կանխագուշակում ենք սպասվող անակնկալները, պետք է հիշենք, որ մեր կողքին կան երեխաներ, ովքեր անգամ չեն սպասում տոնական հրաշքի, երեխաներ, ովքեր չեն ստանում նվերներ Ձմեռ Պապից:

Երեխաներին տոն պարգևելու մեծ ձգտում ունենալով **Հայ օգնության ֆոնդը** երեք տարի շարունակ իրականացրել է **Շոկոլադի Բանկ** ծրագիրը: Այս տարի Այո-ն ևս միացել է այս գեղեցիկ նախաձեռնությանը: **World Vision Armenia**-ի Լոռու Մարզի մեր գործընկերների օգնությամբ մենք առանձնացրել ենք Յաղդան, Պրիվոլնոյե, Միխայլովկա, Գյուլաքարակ և Պուշկինո գյուղերի սոցիալապես դժվար իրավիճակում գտնվող ընտանիքների շուրջ **355 երեխաների,** ում այս տարի կայցելեն Հայ օգնության ֆոնդի և Այո-ի Ձմեռ Պապերը:

Նախատոնական ողջ ամսվա ընթացքում մենք կհավաքագրենք շոկոլադ, ինչպես նաև գումար՝ երեխաներին ձմեռային կոշիկ ու բաճկոն նվիրելու համար: Սաստիկ ցրտին ծնողները երեխաներին դպրոց չեն ուղարկում՝ անհրաժեշտ տաք հագուստ չունենալու պատճառով, ուստի մենք ուզում ենք վստահ լինել, որ երեխաները Նոր Տարին կսկսեն նոր ձմեռային կոշիկներով, բաճկոններով և այլ անհրաժեշտ ձմեռային իրերով:

Այսօր դուք էլ ունեք նրանց Սուրբ Ծննդյան հրաշք պարգևելու հնարավորությունը: Միացե՛ք մեր ուրախ ծրագրին՝ նվիրելով կոնֆետներ կամ աջակցելով մեզ՝ նրանց համար տաք հագուստ գնելու գործում:

Շոկոլադ նվիրաբերելու համար այսօրվանից սկսած մինչ **դեկտեմբերի 25-ը**, երկուշաբթիից ուրբաթ, ժ. 09:00-18:00-ը կարող եք այցելել մեր գրասենյակ: Հասցե՝ **Հայ Օգնության Ֆոնդ,** Մ.Խորենացի 22, Երևան:

Իսկ ձմեռային հագուստի համար հանգանակությունը կարող եք կատարել առցանց՝ www.weareayo.org

Օնլայն հանգանակությունը կտևի մինչ Հունվարի 6-ը, սակայնԱյո-ի և ՀՕՖ-ի աշխատակիցները կսկսեն բաշխել նվերները դեկտեմբերի 25-ից սկսած, այնպես որ ամեն մի երեխա՝ սկսած ամենակարիքավորից, ստանա իր սպասված նվերը: Եվ միայն ձեր օգնությամբ մենք կկարողանանք հրաշքներով լի տոն պարգևել բոլոր 355 երեխաներին: Մենք կշարունակենք ընդունել ձեր հանգանակությունները մինչ հունավրի 6-ը: Օգնեք մեզ ուրախ տոն պարգևել այս մանուկներին: Այս ամենը անհնար կլինի իրականացնել առանց ձեր օգնության:

Բյուջե

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	Մ. ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Բաճկոն	355	5,000	1,775,000	3,698
Կոշիկ	355	4,200	1,491,000	3,107
Շոկոլադ	355 kg	2,000	710,000	1,479

Փոխարժեք 1 ԱՄՆ դոլար = 480 ՀՀ դրամ

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ

$8,283